# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 153-Ա 18 մարտի 2024 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 02/14.30/42151-2023 հանձնարարականը

**որոշում եմ՝**

1" Հաստատել Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի՝

1) սոցիալական ցանցերի էջերի, դրանց գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստերի, հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողների մուտքանունների և գաղտնաբառերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2" Սահմանել, որ՝

1) սույն որոշման առաջին կետի 2-րդ ենթակետով հաստատված ձևում ներառված սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողների մուտքանունները և գաղտնաբառերը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի հանձնարարությամբ թարմացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողների անունները և գաղտնաբառերը, ինչպես նաև դրանց փոփոխությունները

հաշվառվում և պահպանվում են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունում.

3) ադմինիստրատիվ օգտագործողների անունները և գաղտնաբառերը ենթակա են պարտադիր փոփոխության՝ սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց փոփոխության կամ պաշտոնավարման դադարեցման դեպքում:

18.03.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հ ա վ ե լ վ ա ծ N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի մարտի 18 - ի
N 153-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ, ԴՐԱՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԵՐԻ, ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ

| հհ | Սոցիալական ցանցի | | Գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստ, հեռախոսահամար |
|---|---|---|---|
| | անվանումը | էջի հղումը | |
| 1 | Facebook | https://www.facebook.com/gegharkunik.gov | gegharkunik@mta.gov.am<br>060 650050 |

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

18.03.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հ ա վ ե լ վ ա ծ N 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի մարտի 18 - ի
N 153-Ա որոշման

# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄՈՒՏՔԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԱՂՏՆԱԲԱՌԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

| hh | Սոցիալական ցանցի | | Մուտքանուն | Գաղտնաբառ | Ամսաթիվ | Մուտքանուն | Գաղտնաբառ | Ամսաթիվ | Մուտքանուն | Գաղտնաբառ | Ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | էջի հղումը | | | | | | | | | |
| | 1 | | 2 | | | 3 | | | 4 | | |
| 1 | Facebook | https://www.facebook.com/gegharkunik.gov | | | | | | | | | |

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

18.03.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հ ա վ ե լ վ ա ծ N 3
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի մարտի 18 - ի
N 153-Ա որոշման

## Ց Ա Ն Կ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

| hh | Սոցիալական ցանցի | | Շահագործող անձի | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | էջի հղումը | Պաշտոնը | Անունը Ազգանունը |
| | | | Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԱԿՓ և ՀՀԿ վարչության գլխավոր մասնագետ | Հասմիկ Շահբազյան |

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

18.03.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ «ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» 08428824

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ